Տեղեկանք

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Տաջիկստանի Հանրապետության Կառավարության միջև քաղաքացիների փոխադարձ այցելությունների մասին» համաձայնագրի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Տաջիկստանի Հանրապետության Կառավարության միջև քաղաքացիների փոխադարձ այցելությունների մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2017թ. հունիսի 14-ին, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի կողմից:

Համաձայնագրով Կողմերի պետությունների քաղաքացիները արտասահման մեկնելու համար վավեր փաստաթղթերի հիման վրա կարող են մուտք գործել, տարանցմամբ անցնել, դուրս գալ կամ գտնվել մյուս Կողմի պետության տարածքում անընդմեջ կամ մի քանի այցելությամբ՝ 6 ամսվա ընթացքում 90 օրը չգերազանցող ժամկետով՝ հաշված մուտքի պետության պետական սահմանը հատելու օրվանից:

Կողմերից մեկի պետության քաղաքացիները կարող են առանց մուտքի արտոնագրի մուտք գործել, տարանցմամբ անցնել, դուրս գալ և գտնվել մյուս Կողմի պետության տարածքում արտասահման մեկնելու համար վավեր հետևյալ փաստաթղթերով.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝

- կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող դիվանագիտական անձնագիր,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող անձնագիր,
- դիվանագիտական անձնագիր,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր (օտարերկրյա պետություններում վավերականության նշումով),
- Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական (միայն Հայաստանի Հանրապետություն վերադարձի համար).

Տաջիկստանի Հանրապետության քաղաքացիների համար՝

- տեղեկատվության էլեկտրոնային կրիչ պարունակող դիվանագիտական անձնագիր,
- տեղեկատվության էլեկտրոնային կրիչ պարունակող ծառայողական անձնագիր,
- տեղեկատվության էլեկտրոնային կրիչ պարունակող ընդհանուր քաղաքացիական արտասահմանյան անձնագիր,
- 1998 թվականի նմուշի դիվանագիտական անձնագիր (մինչև վավերականության ժամկետի ավարտը),
- 1998 թվականի նմուշի ծառայողական անձնագիր (մինչև վավերականության ժամկետի ավարտը),
- 1998 թվականի նմուշի ընդհանուր քաղաքացիական արտասահմանյան անձնագիր (մինչև վավերականության ժամկետի ավարտը),
- 16 տարին չլրացած երեխայի ծննդյան վկայական (ծնողներից մեկի կամ օրինական ներկայացուցչի արտասահմանյան անձնագրում նշում լինելու դեպքում),

- Տաջիկստանի Հանրապետություն վերադարձի վկայական (միայն Տաջիկստանի Հանրապետություն վերադարձի համար):

Կողմերից մեկի պետության քաղաքացիները մուտք են գործում, դուրս են գալիս, տարանցմամբ անցնում են մյուս Կողմի պետության տարածքով միջազգային հաղորդակցության համար բաց սահմանային անցակետերով:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը նպատակահարմար է գտնում Համաձայնագրի վավերացումը:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը հայտնել է, որ Համաձայնագրի դրույթները չեն հակասում ՀՀ օրենսդրության պահանջներին և չեն պարունակում Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ կատարելու կամ նոր օրենքներ ընդունելու նորմեր:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը չի ստանձնում ֆինանսական պարտավորություններ:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից 30 օր լրանալուց հետո:

2017թ. նոյեմբերի 1-ի դրությամբ տաջիկական կողմից չի ստացվել ծանուցում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով և 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասով՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը հայտնում է, որ վերոհիշյալ Համաձայնագիրը ենթակա է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացմանը:

ՀՀ արտաքին գործերի
նախարարի տեղակալ ~~Շավարշ Քոչարյան~~